ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/85

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ.Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ

Բողոք բերող՝ «Վերիտաս» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագրերը և առարկաները՝

«ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/36» ծածկագրով գնանշման հարցում, գինեկոլոգիական էնդոսկոպիկ հավաքածուի ձեռքբերում,

«ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/37» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական մահճակալների ձեռքբերում,

«ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/38» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական թափոնների ոչնչացման ծառայությունների ձեռքբերում,

«ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/39» ծածկագրով գնանշման հարցում, համացանցային ծառայությունների ձեռքբերում,

«ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/40» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական նշանակության ապրանքի ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Վերիտաս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 05.11.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ արգելել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին ընդունել որոշումներ, կնքել պայմանագրեր և պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել թիվ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/36» ծածկագրով, «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/37» ծածկագրով, «ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/38» ծածկագրով, «ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/39» ծածկագրով և «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/40» ծածկագրով գնման ընթացակարգերը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 05.11.2019թ.-ին:

06.11.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 12.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 12.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.11.2019թ.-ին:

2. «Վերիտաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Վերիտաս» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1 «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել են «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/36», «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/37», «ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/38», «ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/39», «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/40» ընթացակարգերը:

Գնման առաջկաները ըստ ծածկագրի հետևյալն են՝

«ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/36» - գինեկոլոգիական էնդոսկոպիկ հավաքածուի ձեռքբերում,

«ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/37» - բժշկական մահճակալների ձեռքբերում,

«ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/38» - բժշկականկ թափոնների ոչնչացման ծառայությունների ձեռքբերում,

«ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/39» - համացանցային ծառայությունների ձեռքբերում,

«ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/40» - բժշկական նշանակության ապրանքի ձեռքբերում:

1.2 Սույն բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ պատվիրատուի կողմից չի հրապարակվել գնումների պլանը:

Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 16-րդ և 17-րդ կետերի՝

«16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:

17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված գնումների պլանի առկայությունն է:»:

Ելնելով վերոգրյալից, Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝ արգելել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին ընդունել որոշումներ, կնքել պայմանագրեր և պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել թիվ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/36» ծածկագրով, «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/37» ծածկագրով, «ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/38» ծածկագրով, «ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/39» ծածկագրով և «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/40» ծածկագրով գնման ընթացակարգերը:

3. <u>«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.11.2019թ.-ին գրությամբ դիմել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 05.11.2019թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 12.11.2019թ.-ին թիվ 01-14/2144 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն իր կարիքների համար գնումներն իրականացնում է էլեկտրոնային եղանակով, հետևաբար նշված բոլոր գնման ընթացակարգերում ներառված ապրանքները հրապարակված են գնումների էլեկտրոնային համակարգում:

Նշված ընթացակարգերը կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի՝ գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ կետի՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝

1) պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում,

2) գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նշված գնման ընթացակարգերի հայտերի բացման նիստերը տեղի են ունեցել, համապատասխանաբար՝

1. ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/36 - 29/10/2019

2. ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/37 - 29/10/2019

3. ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/38-01/11/2019

4. ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/39 - 01/11/2019

5. ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/40 - 04/11/2019:

Ելնելով վերոգրյալից, կարծում ենք, որ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը տվյալ ընթացակարգերի վերաբերյալ անհիմն է և ուղղված է բժշկական կենտրոնի բնականոն աշխատանքի խաթարմանը:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/85 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 29.10.2019թ.-ին գինեկոլոգիական էնդոսկոպիկ հավաքածուի և բժշկական մահճակալների ձեռքբերման նպատակով հայտարարվել են համապատասխանաբար թիվ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/36» և թիվ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/37» ծածկագրերով, 01.11.2019թ.-ին բժշկակակն թափոնների ոչնչացման և համացանցային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել են համապատասխանաբար թիվ «ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/38» և թիվ «ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/39» ծածկագրերով, իսկ 04.11.2019թ.-ին բժշկական նշանակության ապրանքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է թիվ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/40» ծածկագրով գնման ընթացակարգերը (այսուհետ նաև՝ Ընթացակարգեր):

www.gnumner.am կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 2019թ.-ի գնումների պլանը չի հրապարակվել:

www.armeps.am/PPCM/ կայքում առկա տվյալների համաձայն՝ Ընթացակարգերի հրավերներով նախատեսված ԳՄԱ դասակարգման (CPV) միջանցիկ ծածկագրերը (33161200, 33191130, 42121310, 90521300-90521310 և 32411130) «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 2019թ.-ի գնումների պլանով ընդհանրապես առկա չեն (չեն հրապարակվել):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 05.11.2019թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է, ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը,

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ կետի համաձայն՝ Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ գնման գործընթացը, Օրենքի իմաստով, գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Իսկ արդեն Կարգով ՀՀ կառավարությունը սահմանել է, որ՝ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի

հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է և գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, անփոփելով, նշել, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է: Իսկ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման: Այլ կերպ ասած, գնումների պլանի հաստատումը և/կամ հրապարակումը այն իրավական հիմքն է, որի առկայության պայմաններում է հնարավոր գնման գործընթաց սկսելը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է թիվ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/36», թիվ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/37», թիվ «ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/38», թիվ «ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/39» և թիվ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/40» ծածկագրերով գնման ընթացակարգեր:

www.gnumner.am և www.armeps.am/PPCM/ կայքում առկա տեղեկատվությունների համաձայն՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 2019թ.-ի գնումների պլանը չի հրապարակվել, ինչպես նաև Ընթացակարգերի հրավերներով նախատեսված ԳՄԱ դասակարգման (CPV) միջանցիկ ծածկագրերը (33161200, 33191130, 42121310, 90521300-90521310 և 32411130) «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 2019թ.-ի գնումների պլանով առկա չեն (չեն հրապարակվել):

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընկերության կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքներն հիմնավոր են, քանի որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 2019թ.-ի գնումների պլանը և ԳՄԱ դասակարգման (CPV) միջանցիկ ծածկագրերը www.gnumner.am և www.armeps.am/PPCM/ կայքերում չհրապարակելով խախտել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ, 17-րդ և 18-րդ կետերով սահմանված պահանջները, ինչը հանգեցրել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի

դրույթներով սահմանված սկզբունքների խախտմանը, որպիսի պայմաններում ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքով ներկայացված մնացած պահանջներին, արգելել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին ընդունել որոշումներ, կնքել պայմանագրեր, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Ընկերության կողմից գործի քննության ընթացքում չներկայացվեցին բողոքով այդ պահանջների մասով փաստացի և իրավական հիմքերը, դրանց վերաբերյալ համապատասխան ապացույցները՝ բողոքով ներկայացված պահանջները հիմնավորելու համար:

Ուստի այդ մասով, բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 05.11.2019թ.-ի ներկայացրած ԳԲՔԱ-ԼՕ-2019/85 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/36, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/37, ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/38, ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/39 և ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/40 ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովներին չկայացած հայտարարել գնման ընթացակարգերը:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**